

## **Կոտայքի մարզպետը ՏԿԵ նախարարի հետ ծանոթացել են մարզում ընթացող ճանապարհաշինական աշխատանքներին**

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն աշխատանքային այցով Կոտայքի մարզում էր:

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը նախարարի, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանի, ճանապարհաշինարարների և համայնքապետերի ուղեկցությամբ ծանոթացել են Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության 10 կմ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներին:

Այս աշխատանքների պայմանագրային արժեքը մոտ 1 մլրդ 290 մլն դրամ է: Ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների ավարտը նախատեսված է այս տարեվերջին:

Դիտարկվել է նաև Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի մեկ այլ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: 10.8 կմ երկարությամբ այս հատվածն էլ Բջնիից հասնում է մինչև Հրազդան: Երկու հատվածում էլ շինաշխատանքներն իրականացնում է «Ճանապարհ» ՍՊԸ-ն:

Այս հատվածի պայմանագրային արժեքը մոտ 717 մլն դրամ է և կրկին ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Ավարտը նախատեսված է ընթացիկ տարում: